ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Արմնյուզ» հեռուստաընկերության 2020թ. նոյեմբերի 20-ի ռեպորտաժի հետ կապված՝
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դիմումի վերաբերյալ
(լրացված և խմբագրված)

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

2020թ. նոյեմբերի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը՝ «Արմնյուզ» ՀԸ 2020թ. նոյեմբերի 20-ի եթերի ժամը 15:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված հատվածի (սկսած 33-րդ րոպեից) կապակցությամբ։

Ա. ՓԱՍՏԵՐ

1. «Արմնյուզ» ՀԸ-ն, 2020թ. հոկտեմբերի 28-ին միացել է լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնությանը և ստորագրել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը։

2. 2020թ. նոյեմբերի 20-ին ուղիղ եթերով «Արմնյուզ» ՀԸ-ն հեռարձակել է ռեպորտաժ բողոքի ցույցից, որի ժամանակ ռեպորտաժի հեղինակն իր անունից օգտագործում է «դավաճան Նիկոլ Փաշինյանը», «Նիկոլ Փաշինյանի սադրիչները», «բոլորդ պատասխան եք տալու», «էս բոլոր մարդիկ սադրիչներ են», «բոլորը դասալիքներ են», «այլանդակ լնգուլավազներ», «էս մարդիկ են շարունակում հայհոյել որդեկորույս մայրերին», «էս մարդիկ են շարունակում արցախցի և հայաստանցի տարանջատումներ և բախումներ հրահրել», «լեզուդ

երկարացնելու փոխարեն հայրենիքի փրկության մասին մտածիր, հասկացա՞ր» և այդ կարգի այլ արտահայտություններ։

3. 2020թ. նոյեմբերի 24-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը՝ պնդելով, որ վերը նշված ռեպորտաժում խախտվել են Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի 5-րդ հոդվածի դրույթները և խնդրելով այս կապակցությամբ ներկայացնել փորձագիտական կարծիք։

4. 2020թ. դեկտեմբերի 11-22-ը ԴՄ-ն անցկացրեց առցանց քննարկումներ։

5. 2021թ. հունվարի 27–ին ԴՄ-ն ստացավ «Արմնյուզ» ՀԸ արձագանքը հրապարակված կարծիքի վերաբերյալ։ Այստեղ պարզաբանվում էր, որ հեռուստաընկերության որևէ թղթակից կամ աշխատակից չի եղել քննարկման առարկա տեսանյութի նկարահանման վայրում՝ Սարյան փողոցում, ինչը պատճառաբանվում էր ՀԸ հնարավորությունների սուղ լինելով և իրադարձությունների միաժամանակյա և սրընթաց զարգացմով։

ՀԸ-ից հայտնում են, որ այդ բողոքի ակցիան լուսաբանել է «Վետո» շարժման լրագրողը։ Հեռուստաընկերությունն էլ հեռարձակել է հենց վերջինիս ուղիղ եթերը, ինչպես իրենք են ձևակերպում, «չունենալով որևէ հնարավորություն նախ գնահատելու լրագրողի հոգեվիճակը, կանխատեսելու լրագրողի կողմից քննարկման առարկա արտահայտությունների թույլ տալը, ինչպես նաև վերագրելու դրանք տվյալ լրագրողին»։ Պատասխանում վկայակոչվում է ԴՄ կարծիքը, որում բերված նույն հղումով նյութի 1:02:00 րոպեից առկա է «Վետո» շարժման տարբերանշանը։

Այսպիսով, ՀԸ ներկայացուցիչները կարծում են, որ «Կարծիքում արտացոլված եզրահանգումները՝ կապված «Արմնյուզ» ՀԸ-ն և դրա թղթակցի գործողություններում էթիկայի նորմերի խախտում պարունակելու հետ, (…) ենթակա են փոփոխման»։

«Միևնույն ժամանակ ամբողջությամբ ընդունելի ենք համարում Դիտորդ մարմնի հորդորը ուղիղ եթերում նման իրադարձությունների լուսաբանման կապակցությամբ, և ձեռնարկում ենք հնարավոր բոլոր միջոցները իրադարձությունների նման զարգացման պարագայում ապահովելու ուղիղ եթերի հեռարձակումը միայն սեփական թղթակիցների միջոցով և էթիկայի նորմերի խստիվ պահպամամբ»,- ասվում է նամակում։

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք**

Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

II. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը,

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.3. ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք,

6.4. քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ԶԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

III. **Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ Դիտորդ մարմնի ուղեցույց**

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ա. Փաստեր հավաքելու, տեղեկատվության աղբյուրների հետ հարաբերվելու և հարցազրույցներ վարելու վերաբերյալ

1. Եթե մարդիկ քաղաքական, կրոնական այլ հայացքներ, մաշկի այլ գույն, այլ սեռական կողնորոշում կամ սոցիալական կարգավիճակ ունեն, ապա չի նշանակում, թե նրանք մեզանից վատն են կամ լավը: Նրանք պարզապես տարբեր են մեզանից, ուստի լրագրողներն ու լրատվամիջոցները նրանց և նրանց համայնքների, կազմակերպությունների, միավորումների հետ հարաբերություններում և նրանց վերաբերող լուսաբանումներում նույնպես պիտի առաջնորդվեն համընդհանուր էթիկական սկզբունքներով:

4. Նյութեր հավաքելիս հարկ է գնահատել բոլոր հնարավոր կանխակալ կարծիքները: Հիշեք, որ այս կամ այն խմբի մասին մի այլ խմբի կարծիքը մեծ մասամբ հիմնվում է ոչ թե փաստերի, այլ նախապաշարումների, կանխակալության և կարծրատիպերի վրա:

Բ. Նյութեր պատրաստելու և հրապարակելու վերաբերյալ

5. Խուսափեք մակդիրներ, բնորոշումներ, կարծրատիպեր օգտագործելուց:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

գնահատելով

- ՀՌՀ-ի կողմից մասնագիտական կարծիքի համար ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին դիմելու նախադեպը՝ այն պարագայում, երբ խնդրո առարկա հեռուստանյութում, Հանձնաժողովի գնահատմամբ, բացակայում են ՀՀ «Լիցենզավորման մասին» և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքների ակնհայտ խախտումներ, հետևաբար և լրատվամիջոցին պատասխանատվության ենթարկելու հիմքեր չկան, սակայն դրա բովանդակությունը մտահոգության առիթ է հանդիսանում և ենթադրում է որոշակի հանրային արձագանք,

վերահաստատելով, որ

- յուրաքանչյուրն ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, այսուհանդերձ, հիշեցնում է, որ լրագրողներն ու լրատվամիջոցները սեփական կարծիքները կարող են արտահայտել խմբագրական, վերլուծական, մեկնաբանական նյութերում,

համարելով, որ

- լուրերում, ռեպորտաժներում սեփական կարծիքի և գնահատող դատողությունների, մակդիրների, բնորոշումների, որակումների օգտագործումը հակասում է անաչառության և անկողմնակալության, ինչպես նաև փաստերի և կարծիքների տարանջատման սկզբունքին,

արձանագրում է՝

- ՀԸ-ն, հրապարակելով ուղիղ եթերում լրագրողի անունից հնչող «դավաճան Նիկոլ Փաշինյանը», «Նիկոլ Փաշինյանի սադրիչները», «բոլորդ պատասխան եք տալու», «Էս բոլոր մարդիկ սադրիչներ են», «բոլորը դասալիքներ են», «այլանդակ լնգուլավազներ» և այդ կարգի այլ արտահայտություններ, ակնհայտորեն շեղվել է անկողմնակալ ռեպորտաժ պատրաստելու սկզբունքից։ Այնուհետև լրագրողը նաև սեփական կարծիքը ներկայացրել է որպես փաստ՝ նշելով. «Էս մարդիկ են շարունակում հայհոյել որդեկորույս մայրերին», «Էս մարդիկ են շարունակում արցախցի և հայաստանցի տարանջատումներ և բախումներ հրահրել» և այլն,

- հեռուստաընկերությունը պատասխանատու է իր եթերի ամբողջ բովանդակության համար, անկախ նրանից, թե ով և երբ է ստեղծում այդ բովանդակությունը՝ իր սեփական՞ն թղթակիցը, թե՞ այլ կազմակերպության ներկայացուցիչ, ուղիղ հեռարձակմա՞ն

ժամանակ, թե՞ տեսագրված նյութում,

- նման դեպքում լրատվամիջոցը կարող է պաշտպանված լինել, եթե միջոցներ է ձեռնարկել, որպեսզի ուղիղ հեռարձակման ընթացքում բացառվի կամ կասեցվի որոշակի կանոնների խախտումը: Դա տեղի չի ունեցել, և պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է ՀԸ-ի վրա, քանի որ էթիկական սկզբունքները հարգող ցանկացած լրատվամիջոց, տեսնելով, որ եթերում աշխատող լրագրողը գտնվում է ակնհայտ հուզական վիճակում և չի տիրապետում սեփական զգացմունքներին, պետք է անմիջապես ընդհատեր ուղիղ եթերը, հետ կանչեր վերջինիս և իրադարձությունների վայր գործուղեր այլ լրագրողական խումբ,

- հեռուստաընկերությունը, այլ կազմակերպության ներկայացուցչին ուղիղ եթեր վստահելուց առաջ, պետք է վերջինիս պարտավորեցնի պահպանել հեռուստաընկերության կամավոր ստանձնած էթիկական եւ այլ պարտավորությունները, կամ առնվազն չհակասել դրանց: ՀԸ-ն նախապես պետք է այլ կազմակերպության ներկայացուցչին բանավոր ներկայացնի նրա պատասխանատվությունն ուղիղ եթերում, եթե այդ կազմակերպության և ՀԸ-ի միջև նախապես կնքված չի եղել համագործակցության որեւէ համաձայնագիր՝ եթերում վարքի մասին հստակ դրույթներով: Սա առանձնահատուկ կարևորվում է արտակարգ իրավիճակում լուսաբանում ապահովելիս,

- եթե ՀԸ-ի եթերում ուղիղ հեռարձակման ժամանակ այլ կազմակերպություն է ապահովում լուսաբանումն ու կատարում մեկնաբանություններ, ապա ամբողջ հեռարձակման ընթացքում անհրաժեշտ է լուսագրով հստակ նշել այդ և ոչ թե միայն մի քանի ժամ հետո նույն տեսանյութը հրապարակելիս: Եթե այլ կազմակերպության ներկայացուցիչն ուղիղ եթերում խաթարում է ՀԸ-ի մեդիա արժեքները, ՀԸ-ն պետք է ուղիղ հեռարձակումն ընդհատի և անմիջապես իր լսարանին բացատրի (լուսագրով կամ բանավոր խոսքով), թե ինչու դա տեղի ունեցավ: Համաձայն ՄԻԵԴ-ի դիրքորոշման, ուղիղ եթերի դեպքում լրագրողն է՛լ ավելի զգույշ պետք է լինի, քանի որ այդ դեպքում սխալներն այլևս հնարավոր չի լինում ուղղել, այսինքն նման դեպքում լրագրողն ազատ արտահայտվելու իրավունքով ավելի քիչ է պաշտպանված, քան այն դեպքերում, երբ ուղիղ հեռարձակում չի կատարվում,

- ուղիղ եթերում լրագրողը «Լեզուդ երկարացնելու փոխարեն հայրենիքի փրկության մասին մտածիր, հասկացա՞ր» և նման արտահայտություններով անհարկի խոսքակռվի մեջ մտնելով իրադարձությունների մասնակիցների հետ՝ անտեսում է չեզոք լուսաբանողի իր գործառույթը:

Դիտորդ մարմինը հորդորում է՝

- բոլոր և հատկապես հեռարձակող լրատվամիջոցներին՝ առավել զգոն լինել վերջին օրերի իրադարձությունները լուսաբանելիս և հատկապես ուղիղ եթերների ժամանակ, չհեռարձակել այնպիսի արտահայտություններ, որոնք մասնագիտական էթիկայի նորմերի ակնհայտ խախտումներ են պարունակում և չեն նպաստում հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը:

Ընդունվել է 2021թ. փետրվարի 5-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 61-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: